

Հիշատակի Հոգեհանգստյան կարգ Եղեգնաձորում

09.05.2015



Եղեգնաձորի Երկրապահ կամավորների հուշարձանի մոտ, մասնակցությամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանի, Մելս Հարությունյանի, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Կամո Սահակյանի, Եղեգնաձորի քաղաքապետ Դավիթ Հարությունյանի և հանդիսապետությամբ Վայոց ձորի թեմի փոխառաջնորդ Տ. Զարեհ վրդ. Կաբադյանի, տեղի ունեցավ Հոգեհանգստյան կարգի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների և զոհված Երկրապահ կամավորականների: Այնուհետ Հայր Սուրբը հանդես եկավ օրհնությամբ: Իսկ վերջում ներկաներին իրենց գեղեցիկ ելույթներով ողջունեցին Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի և թիվ 5 մանկապարտեզի սաները:

Նշենք, որ մինչ հուշարձանի մոտ տեղի ունեցած միջոցառումը, Եղեգնաձորի առաջնորդանիստ Սուրբ. Աստվածածին եկեղեցում Վայոց ձորի թեմի փոխառաջնորդ Տ. Զարեհ վրդ. Կաբադյանի ձեռամբ մատուցվեց Սուրբ. Պատարագ: